


100/6
Վ. Ի. ԼԵՆԻՆ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1929



Վ. Ի. ԼԵՆԻՆ



ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

A $\frac{I}{8182}$



Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ ր ա տ ա ր ա Կ չ ու Լ ք յ ու Ն
ՅԵՐԵՎԱՆ 1929

Լենինն այս հոգովածը, ըստ յերեւութին, գրել է 1918 թ. մարտի վերջին կամ ապրիլի սկզբին: Հոգովածը գրելու ժամանակը վորոշելու հիմունքը հենց հոգովածի բովանդակութիւնն է. — այս հոգովածն ընդգրկում է այն հարցերի շրջանը, վոր շարադրված են Լենինի Խնտխտուտում գտնվող «Յորհրդային իշխանության հերթական խնդիրները» հոգովածի սկզբության մէջ. վերջին հոգովածը Լենինը թելադրել է ապրիլին 1918 թ. մարտի 28-ին: Հնարավոր է նաեւ, վոր հոգովածն ավելի վաղ գրված լինի, վորովհետեւ վ. Իլյիշը հենց այս հարցերը նշել էր մշակման համար արդէն 1917 թ. դեկտեմբերի վերջին, վոր յերեւում է այդ ժամանակ գրած և Խնտխտուտում պահված նրա «Հրապարակախօսի որդորից (թեմաներ մշակման համար)» ձեռագրից: Հոգովածը տպագրվում է այն ձեռագրից, վոր Խնտխտուտին և հանձնել Մ. Ի. Ուլյանովան:

Լ. Լ. ԳԻՆԻ ԻՆՏԱՅԻՏԱՆ:

Հր. № 993: Գրառեպլար № 2162 (բ), Տիրած 5000:

Պետհրատի առաջին տպարան Վաղ—պատում:

Պատվեր № 107

Բուրժուական գրողները հսկայական
թուղթ են գրոտել և գրոտում են, ներ-
քողելով կապիտալիստների և կապի-
տալիստական կարգի մրցակցությունը,
մասնավոր ձեռներեցությունը և մյուս
հիանալի առաքինությունները և հրա-
պույրները: Սոցալիստներին մեղադրում
ելին, վոր նրանք չեն ուզում հասկա-
նալ այս առաքինությունների նշանա-
կությունը և հաշվի առնել «մարդու
բնավորությունը»: Իսկ իրոք վաղուց
ե, վոր կապիտալիզմը մանր ապրան-
քային ինքնուրույն արտադրությանը,
վորի ժամանակ մրցակցությունը քիչ
շատ լայն չափերով կարող եր ձեռնե-
րեցություն, եներգիա, նախաձեռնու-
թյան համարձակություն դաստիարակել,

փոխարինել ե խոշոր և խոշորագուշն գոր-
ծարանային արտադրությունով, ակցիո-
ներական ձեռնարկություններով, սին-
դիկատներով և ուրիշ մոնոպոլիաներով:

Այսպիսի կապիտալիզմի ժամանակ
մրցակցություն նշանակում ե ընակչու-
թյան մասնայի, նրա հսկայական մեծա-
մասնության, աշխատավորների իննսուն
իննը հարյուրերորդի ձեռներեցության,
եներգիայի, համարձակ նախաձեռնու-
թյան անլուր գազանային ճնշում,—
նշանակում ե նույնպես մրցակցության
փոխարինում ֆինանսական սրիկայու-
թյամբ, բռնակալությամբ, ստորաքար-
շությամբ սոցիալական սանդուխքի վե-
րևում:

Սոցիալիզմը վոչ միայն չի վոհնչաց-
նում մրցակցությունը, այլ, ընդհակա-
ռակը, սուաջին անգամ հնարավորու-
թյուն ե ստեղծում իրոք լայնորեն կի-
բառելաչն, իրոք մասնայական չափով,

իրոք աշխատավորների մեծամասնութիւնն այնպիսի աշխատանքի ասպարեզ քաշել, վորտեղ նրանք կարող են իրենց ընդունակութիւնները չերևան բերել, իրենց ընդունակութիւնները ծավալել, տաղանդները դրսևորել, վոր ժողովրդի մեջ կուսական աղբյուրի չեն նման և վոր կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել ե հազարներով ու միլիոններով:

Մեր խնդիրն ե այժմ, չերբ սոցիալիստական կառավարութիւնն իշխանութիւն գլուխ ե կսնդնած, կազմակերպել մրցակցութիւնը:

Բուրժուազիայի արբանյակները և պնակալեզները սոցիալիզմը պատկերում ելին իբրև միատեսակ, արքունի, միորինակ, դորշ դորանոց: Դրամի քսակի լակեցները, շահագործողների ստրուկները—պարոնայք բուրժուական ինտելիգենտները—սոցիալիզմով «վախեցնում ելին» ժողովրդին, վորը հենց

կապիտալիզմի պայմաններում չափից
դուրս, ստիպողական աշխատանքի,
կիսաաքաղց կյանքի, ծանր աղքատու-
թյան տաժանակրուժյանն ու գործանո-
ցին ե գատապարտված: Այս տաժանա-
կրուժյունից աշխատավորներին ազա-
տագրելու առաջին քայլը հանդիսա-
նում ե կալվածատիրական հողերի կոն-
ֆիսկացիան, բանվորական վերստու-
գում մտցնելը, բանկերի ազգայնացումը:
Հետևյալ քայլերը կլինեն ֆաբրիկաների
և գործարանների ազգայնացումը, ամ-
բողջ բնակչության հարկադրական կազ-
մակերպումն սպառողական ընկերու-
թյուններում, վորոնք միևնույն ժամա-
նակ արդյունքների վաճառքի ընկերու-
թյուններ են հանդիսանում, հացի և
այլ անհրաժեշտ սուարկաների առևտրի
պետական մոնոպոլիան:

Ձեռներեցություն, մրցակցություն,
համարձակ նախաձեռնություն յերևան

բերելու լաջն, իսկապես մասսայական
հնարավորության ստեղծումը միայն
այժմ ե հանդես գալիս: Ամեն մի գոր-
ծարան, վորտեղից կապիտալիստը դուրս
ե շարտված կամ գոնե սանձահարված
ե իսկական բանվորական վերստուգու-
մով, ամեն մի գյուղ, վորտեղից դուրս
են վոնդել շահագործող-կապիտալիստին
և նրա հողը խլել, այժմ և միայն այժմ
ե հանդիսանում այն ասպարեզը, վոր-
տեղ աշխատանքի մարդը կարող ե իր
ընդունակությունները չերևան բերել,
կարող ե մի քիչ մեջքը շտկել, կարող ե
ուղղվել, կարող ե իրեն մարդ զգալ: Ոտար
ների համար աշխատելու, շահագոր-
ծողների համար ստիպողաբար աշխատե-
լու հարյուրամյակներից հետո առաջին
անգամ հնարավորություն ե ստեղծվում
իր համար աշխատել, ընդ վորում աշ-
խատել, հենվելով նորագույն տիեռիկայի և
կուլտուրայի բոլոր նվաճումների վրա:

Իհարկե, ստիպողական աշխատանքն
 իր համար կատարվող աշխատանքով
 փոխելու մարդկության պատմության
 այս մեծագույն գործը չի կարող տեղի
 ունենալ առանց շփումների, դժվարու-
 թյունների, ընդհարումների, առանց
 բռնության հին պորտաբույծների և
 նրանց արբանյակների վերաբերմամբ:
 Այս մասին բանվորներից վոք վոք իլ-
 լյուզիաներ չունի. — շահագործողների
 համար կատարած չերկար ու չերկար
 տարիների տաժանակիր աշխատանքով,
 նրանց անթիվ ծաղր ու ծանակով կոփ-
 ված, ծանր կարիքով կոփված բանվոր-
 ները և ամենաաղքատ գյուղացիները
 գիտեն, վոր շահագործողների դիմա-
 դրությունը կոտրելու համար ժամանակ
 ե հարկավոր: Բանվորները և գյուղացի-
 ներն ամենևին վարակված չեն պարոնալք
 ինտիլիգենտների, այս ամբողջ Նովո-
 ժիզնական («Новая жизнь» թերթի շուր-

Ջրհամախմբվածների: Ծանոթ. [Ժարգ.)
և այլ տիղմի, սանտիմենտալ իլլյուզիա-
ներով, վորոնք խռպոտվելու չափ «ա-
ղաղակում ելին» կապիտալիստների դեմ,
«ժեստեր անում» նրանց դեմ, «ջար-
դուբուրդ անում» նրանց աչն պաշմա-
նով, վոր լաց լինել սկսեն և իրենց
ծեծված լակոտի նման պահեն, չերբ
գործի, սպառնալիքն իրացնելու, կապի-
տալիստներին հեռացնելու գործը պրակ-
տիկայում իրագործելու ժամանակը հա-
սալ:

Ստիպողական աշխատանքն իր հա-
մար կատարվող աշխատանքով փոխե-
լու մեծ գործը, մի աշխատանքով, վոր
պլանաչափ կազմակերպված ե հսկայա-
կան. համապետական (վորոշ չափով
նաև միջազգային, համաշխարհային)
մասշտաբով, բացի շահագործողների դի-
մադրութունը ճնշելու «ռազմական»
միջոցներից, պահանջում ե նույնպես ա-

հագին կազմակերպչական, որգանիզատորական ջանքեր պրոլետարիատի և ամենաաղքատ գյուղացիության կողմից։ Կազմակերպչական խնդիրը մի անխզելի ամբողջութուն է դառնում յերեկվա ստրկատերերի (կապիտալիստների) և նրանց լակեյների — պարոնալք բուրժուական ինտելիգենտների — վոհմակի անխընա ռազմական ճնշման խնդրի հետ։ Մենք միշտ կազմակերպիչ և պետ ենք չեղել, մենք հրամանատար ենք չեղել — աչսպես են ասում և մտածում յերեկվա ստրկատերերը և նրանց ինտելիգենտ գործակատարները, մենք ուզում ենք այդպիսին մնալ, մենք չենք ուզում «ռամիկ ժողովրդին», բանվորներին և գյուղացիներին, հնազանդվել, մենք չենք յենթարկվի նրանց, մենք գիտութունը փողի քսակի արտոնութունների և ժողովրդի վրա կապիտալի տիրապետության պաշտպանության գործիք կդարձնենք։

Այսպես են ասում, մտածում, գործում
բուրժուաները և բուրժուական ին-
տելիգենտները: Իրենց կառու տեսակե-
տից նրանց վարմունքը հասկանալի է —
ճորտատեր-կալվածատերերի պնակա-
լեզների և ձրիակերների համար, տեր-
տերների, գրազիրների, գոգոյլյան տի-
պեր հանդիսացող չինովնիկների, Բելին-
սկուն ասող «ինտելիգենտների» հա-
մար նույնպես «գժվար» եր բաժանվել
ճորտատիրական իրավունքից: Բայց շա-
հագործողների և նրանց ինտելիգեն-
տական ընդոժինների¹ (челядь) գործը —
անհույս գործ է: Նրանց դիմադրու-
թյունը բանվորները և գյուղացիները
կոտորում են, — դժբախտաբար. դեռ վոչ
բավականաչափ հաստատ, վճռական և
անխնա, — և կկոտորեն:

«Նրանք» կարծում են, վոր «հասա-
րակ ժողովուրդը», «հասարակ» բանվոր-

¹) Գյուղաների (ծ. Թ.):

ները և ամենաաղքատ գլուղացիները
գլուխ չեն հանի մեծ, բառիս համաշ-
խարհային-պատմական խմաստով իսկա-
պես հերոսական կազմակերպչական
բնույթ ունեցող խնդրից, վոր սոցալիս-
տական հեղափոխությունը դրել ե աշ-
խատավորների ուսերին: «Առանց մեզ
կառավարվել չեն կարող», - մխիթարում
են իրենց կապիտալիստներին և կապի-
տալիստական պետությանը ծառայել
սովորած ինտելիգենտները: Նրանց
լպիրը հաշիվը չի արդարանա. -- արդեն
այժմ կրթված մարդիկ զատվում են,
անցնելով ժողովրդի կողմը, աշխատա-
վորների կողմը, սգնելով մեզ, վոր կոտ-
րենք կապիտալի սպասավորների դի-
մադրությունը: Իսկ կազմակերպչական
տաղանդներ գլուղացիության և բան-
վոր դասակարգի մեջ շատ կան, և այդ
տաղանդները դեռ նոր են սկսում դի-
տակցության գալ, արթնանալ, կենդա-

նի, ստեղծագործական, մեծ աշխատանքի մեջ քաշվել, ինքնուրույն կերպով ձեռք գտրկել սոցիալիստական հասարակության շինարարության գործին:

Այժմ ամենագլխավոր խնդիրներից մեկը, չեթե վոչ ամենագլխավորը, այն է, վոր ինչքան կարելի չե, ավելի լայն զարգացնենք բանվորների և ընդհանրապես բոլոր աշխատավորների ու շահագործվողների այդ ինքնուրույն նախաձեռնությունը ստեղծագործական կազմակերպչական աշխատանքի առարիղում: Ինչպես ել վոր լինի, հարկավոր ե ջախջախել այն հին, անհեթեթ, վայրենի, զաղրելի ու նողկալի նախապաշարմունքը, վոր իբր թե պետություն կառավարել, իբր թե սոցիալիստական հասարակության կազմակերպչական շինարարությունը վարել կարող են միայն այսպես կոչված «բարձր դասակարգերը», միայն հարուստները կամ

հարուստ դասակարգերի դպրոցն ան-
ցածնեքը:

Այդ նախապաշարմունք եւ Այդ նախա-
պաշարմունքը պահպում եւ փտած հնամո-
լության, կոպտության, սարկական սովո-
րության շնորհիւ, իսկ եւ ավելի մեծ չա-
փով կապիտալիստների կեղտոտ շահա-
մոլությամբ, վորոնք շահագրգռված են
այն բանով, վոր կողոպտելով կառավարեն
և կառավարելով կողոպտեն: Վնչ, Վնչ
մի բոպե բանվորները չեն մոռանա, վոր
նրանց հարկավոր ե գիտության ուժը:
Այն անսովոր մոլումը, վոր բանվորները
յերևան են բերում գեպի կրթության
գործը, յերևան են բերում հենց այժմ,
ստացուցում ե, վոր այս առթիւ պրոլե-
տարիատի միջավայրում մոլորութուն-
ներ չկան և չեն կարող լինել: Բայց
կազմակերպչական աշխատանքը մատ-
չելից ե և՛ ռաբֆային բանվորին, և՛
գյուղացուն, վորը գրագետ ե, ճանա-

չում ե մարդկանց, ունի գործնական
փորձ։ Այդպիսի բազմաթիվ մարդիկ կան
«Ուսմիկ ժողովրդի» մեջ, վորի մասին
գոռոզությամբ և արհամարհանքով են
խոսում բուժուական ինտելիգենտները։
Այդպիսի տաղանդները բանվոր դասա-
կարգի և գյուղացիության մեջ դեռ կու-
սական աղբյուրի և հարստագուն աղ-
բյուրի վիճակում են։

Բանվորները և գյուղացիները դեռ
«վեհերում են», դեռ չեն ընտելացել
այն բանին, վոր նրանք այժմ իշխող դա-
սակարգ են, նրանք դեռ բավականա-
չափ վճռական չեն։ Միլիոնավոր ու մի-
լիոնավոր մարդկանց այդ հատկություն-
ները, մարդիկ, վորոնք իրենց ամբողջ
կյանքում սովից ու կարիքից դրդված
հարկադրված ելին աշխատել, միան-
գամից հեղաշրջում ստեղծել չեյին կա-
րող։ Բայց 1917 թ. Հոկտեմբերյան հե-
ղափոխության ուժն ել հենց այն ե,

կենսունակութիւնն ել հենց այն է,
անհաղթելիութիւնն ել հենց այն է, վոր
նա արքնացնում է այդ հատկութիւն-
ները, ջարդում է բոլոր հին խոչընդոտ-
ները, կոտորում հնացած շղթաները,
աշխատավորներին նոր կյանքի ինքնու-
րույն ստեղծագործութեան ուղին դուրս
բերում:


Հաշվառք և վերստուգում—ահա բան-
վորների, զինվորների և գլուղացիների
պատգամավորների ամեն մի խորհրդի,
ամեն մի սպառուղական ընկերութեան,
ամեն մի միութեան կամ մատակարար-
ման կոմիտեի, ամեն մի ֆաբրիկա-
գործարանային կոմիտեի կամ ընդհան-
րապես բանվորական վերստուգման ու-
ղանի գլխավոր տնտեսական խնդիրը:

Պայքարն այն հին սովորութեան դեմ,
վորով աշխատանքի հափին, արտա-
դրութեան միջոցներին նայում են հար-
կադրաբար աշխատող մարդու տեսա-

2818
A

կետով, թե ինչպես կարելի չեր ազատ-
վել ավելորդ ծանրությունից, թե ինչ-
պես կարելի չեր թեկուզ մի պատահա-
կել բուժուագիայից, — այս պալքարն
անհրաժեշտ է: Այս պալքարն արդեն
սկսել են առաջավոր, գիտակից բան-
վորները, վորոնք վճռական դիմադրու-
թյուն են ցույց տալիս այն գործարա-
նային միջավայր չեկածներին, վորոնք
թիվը հատկապես մեծ եր պատերազմի
ժամանակ և վորոնք այժմ կցանկանային
ժողովրդական գործարանին, ժողովրդի
սեփականություն դարձած գործարանին
վերաբերվել առաջվա նման այն միակ
մտադրության տեսակետից, վոր «ավելի
մեծ կտոր պոկեն ու փախչեն»: Այս
պալքարում գլուղացիության և աշխա-
տավոր մասսաների ամբողջ գիտակից,
ազնիվ, մտածող մասն առաջավոր բան-
վորների կողմը կանցնի:

Հաշվառք և վերստուգում, յեթե սրանք:



կատարվում են բանվորների, գինվոր-
ների և գյուղացիների պատգամավոր-
ների խորհրդների միջոցով, իբրև բարձ-
րագույն պետական իշխանության, կամ
այդ իշխանության ցուցումներով, լիա-
զորությունով, ամեն տեղի վերա-
բերվող, ընդհանրական, ունիվերսալ
հաշվառք և վերստուգում, — աշխատան-
քի քանակի և արդյունքների բաշխման
հաշվառք և վերստուգում, — այս ե սո-
ցիալիստական վերակազմության եյու-
թունը, չերբ պրոլետարիաաի քաղաքա-
կան տիրապետությունն ստեղծված և
ապահովված է:

Հաշվառքը և վերստուգումը, վոր սո-
ցիալիզմին անցնելու համար անհրա-
ժեշտ են, կարող են միայն մասսայական
լինել: Միայն բանվորների և գյուղացի-
ների մասսայի կամավոր և բարեխիղճ,
հեղափոխական բուռն վոզևորությամբ
կատարվող աշխատակցությունը հաշ-

վառքի և հարուստների, ժուլիկների,
պորտաբուլճների, խուլիգանների վեր-
ստուգման գործին կարող ե հաղթել
անիծյալ կապիտալիստական հասարա-
կության այս մնացորդներին, մարդկու-
թյան այս թափթփուկներին, այս ան-
հույս կերպով փտած և անկենդան ան-
դամներին, այս վարակը, ժանտախտը,
խոցը, վոր սոցիալիզմին ժառանգու-
թյուն ե մնացել կապիտալիզմից:

Բանվորներ և գյուղացիներ, աշխա-
տավորներ և շահագործվողներ: Հողը,
բանկերը, ֆաբրիկաները, գործարան-
ներն ամբողջ ժողովրդի սեփակա-
նություն են դարձել: Ինքներդ ձեռք
զարկեք արտադրության և արդյունքնե-
րի բաշխման հաշվառքի և վերստուգման
գործին, — այս և միայն այս ե սոցիա-
լիզմի հաղթանակի ուղին, նրա հաղ-
թանակի գրավականը, ամեն տեսակ
շահագործում, ամեն տեսակ կարիք և

աղքատութիւն հաղթահարելու գրավա-
կանը: Վերովհետև Ռուսաստանում հա-
ցը, յերկաթը, փայտը, բուրդը, բամ-
բակը և վուշը հերիք ե բոլորին, միայն
թե աշխատանքը և արդշունքները ճիշտ
բաշխվեն, միայն թե այդ բաշխման վրա
համաժողովրդական գործարար, պրակ-
սիկ վերստուգում հաստատվի, միայն
թե ժողովրդի թշնամիներին—հարուստ-
ներին, նրանց պնակալեզներին, ապա-
ժուլիկներին, պորտաբուլժներին և խու-
լիգաններին հաղթենք վոչ միայն քաղա-
քականության մեջ, այլև ամենուրյա սրն-
սեսական կյանքում:

Անխնա պետք ե լինենք դեպի ժո-
ղովրդի այդ թշնամիները, սոցիալիզմի
թշնամիները, աշխատավորների թշնա-
միները: Կյանքի ու մահի կռիվ հարուստ-
ների և նրանց պնակալեզների, բուր-
ժուական ինտելիգենտների դեմ, կռիվ
ժուլիկների, պորտաբուլժների և խու-

լիցաններ ղեմ: Թե մեկը և՛ թե
մյուսները, թե առաջինները և՛ թե
վերջինները հարազատ լեզբալոներ
են, կապիտալիզմի զավակներ, ազա-
կան և բուրժուական հասարակության
սիրված վորդիններ, մի հասարակութուն,
վորի մեջ մի բուռն մարդիկ կողոպտում
եյին ժողովրդին, ծանակի չենթարկում
ժողովրդին. — մի հասարակութուն, վորի
մեջ կարիքը և աղքատութունը հազա-
րավորներին ու հազարավորներին խու-
լիզանության, վաճառվածության, ժու-
լիկության, մարդկային կերպարանքը
մոռանալու ուղին եյին նետում, — մի
հասարակութուն, վորտեղ աշխատավոր-
ների մեջ անխուսափելիորեն դաստիա-
րակվում եր մի ձգտում՝ թեկուզ խա-
բեբայությամբ խուսափել շահագործու-
մից, թեկուզ մի բոսկե ազատվել, փրկ-
վել զաղրելի աշխատանքից, թեկուզ մի
կտոր հաց պոկել ինչ ձևով ել վոր լինի,

ինչ գնով ել վոր լինի, վորպեսզի սովի
չմատնվեն, վորպեսզի ինքը և իր մոտիկ-
ներն իրենց կիսաքաղց չզգան:

Հարուստներն ու ժուլիկները մեկ մե-
դալի չերկու կողմն են, կապիտալիզմի
մնած պարագիսների չերկու գլխավոր
կարգը, սոցիալիզմի գլխավոր թշնամի-
ները. հարկավոր ե այդ թշնամիներին
ամբողջ բնակչության հատուկ հսկողու-
թյան տակ առնել, չերբ նրանք ամե-
նափոքը չափով խանգարում են սոցիա-
լիստական հասարակության կանոնները
և որենքները, պետք ե անխնա պատժել
նրանց: Ամեն մի թուլություն, ամեն
մի տատանում, ամեն մի սանտիմեն-
տալություն այս տեսակետից մեծագույն
վոճրագործություն կլինեի սոցիալիզմի
հանդեպ:

Վորպեսզի սոցիալիստական հասա-
րակությունն անվնաս դարձնենք այդ
պարագիտներից, հարկավոր ե կազմա-

կերպել համաժողովրդական, միլիոնա-
վոր ու միլիոնավոր բանվորների և գյու-
ղացիների կողմից կամովին, չեռանդուն,
հեղափոխական խանդավառությամբ
պաշտպանվող հաշվառք և վերստու-
գում աշխատանքի քանակի, արդյունք-
ների արտադրության և բաշխման վրա:
Իսկ վորպեսզի կազմակերպենք այս հաշ-
վառքը և վերստուգումը, վոր լիովին
մտնելի, լիովին ըստուժյալ է ամեն մի
ազնիվ, խելացի, ժիր բանվորի և գյու-
ղացու, հարկավոր է կյանքի կոչել
ներանց սեփական, ներանց միջավայրից
ծագող կազմակերպչական տաղանդնե-
րին, հարկավոր է կազմակերպչական
հաջողությունների մասում ներանց մեջ
մրցակցություն հրահրել և համապետա-
կան մասշտաբով կարգի գցել այն:
Հարկավոր է, վորպեսզի բանվորները
և գյուղացիները պարզ հասկանան այն
տարբերությունը, վոր կա կրթված

մարդու անհրաժեշտ խորհրդի և դատարկապորտության վրա «հասարակ» բանվորի և գյուղացու կողմից անհրաժեշտ վերստուգում ունենալու միջև, դատարկապորտութուն, վոր աջնքան սովորական ե «կրթված» մարդկանց մեջ:

Այս դատարկապորտութունը (разгиль действую), անհոգութունը, անմաքրութունը, անճշտաստանութունը, նյարդային շտապողականութունը, գործը դիսկուսսիայով, աշխատանքը խոսակցութուններով փոխարինելու հակումը, աշխարհում ամեն բանի ձեռք զարկելու և վոչ մի բան մինչև վերջ չհասցնելու հակումը «կրթված մարդկանց» հատկութուններից մեկն ե, վորն ամենևին նրանց վատ բնավորութունից, ավելի ևս չարամտութունից չի բղխում, այլ նրանց կյանքի ամբողջ սովորութուններից, նրանց աշխատանքի պարագա-

լից, խիստ հոգնածությունից, մտավոր
և ֆիզիկական աշխատանքի աննորմալ
անջատումից և այլն և այլն:

Մեր հեղափոխության սխալների,
թերությունների, վրիպումների մեջ քիչ
դեր չեն խաղում այն սխալները և այլն,
վոր առաջ են գալիս մեր միջավայրի
ինտելիգենտների այս ցավալի — բաց
տվյալ մոմենտում անխուսափելի — հատ-
կություններից և ինտելիգենտների
կազմակերպչական աշխատանքի վրա
բանվորների կողմից անբավարար վեր-
ստուգում ունենալու բացակայությու-
նից:

Բանվորներն ու գյուղացիները դեռ
«վեհերում են», նրանք սրանից պետք
է փրկվեն, և, անկասկած, նրանք սրա-
նից կփրկվեն: Առանց կրթված մարդ-
կանց, ինտելիգենտների, մասնագետ-
ների խորհրդի, առանց նրանց ղեկա-
վար ցուցումների կառավարվել չի

կարելի: Ամեն մի քիչ-շատ խելացի
բանվոր և գյուղացի հասկանում ե այս
գերազանցութունը և մեր միջավայրի
ինտելիգենտները չեն կարող գանգա-
վել բանվորների և գյուղացիների ուշա-
դրության և ընկերական հարգանքի
պակասից: Բայց այլ բան ե խորհուրդը
և ղեկավար ցուցումը, մի այլ բան՝ գործ-
նական հաշվառքի և վերստուգման կադ-
մակերպումը: Ինտելիգենտներն ամեն
քայլափոխում ամենահիանալի խորհուրդ-
ներ և ցուցումներ են տալիս՝ բայց
ծիծաղելի, անհեթեթ, խայտառակ չա-
փով «անձեռք», անընդունակ են դուրս
գալիս այդ խորհուրդները և ցուցում-
ները կենսագործելու, գործնականա-
պես վերստուգումը իրագործելու, վոր-
պեսզի խոսքը գործի փոխվի:

Ահա թե վորտեղ ե, վոր վոչ մի դեպ-
քում չի կարելի առանց «Ժողովրդից
յելաժ» պրակտիկ կազմակերպիչների,

բանվորների և աշխատավոր գյուղացիների ոգնության և ղեկավար դերի կառավարվել: Մեծ բան չկա այստեղ, այս ճշմարտությունը պետք է ամենից ավելի լավ բանվորներն ու գյուղացիները յուրացնեն: Նրանք պետք է հասկանան, վոր այժմ ամեն բան պրակտիկայից է կախված, վոր հենց հասել է այն պատմական մոմենտը, յերբեք որիան պրակտիկայի չե փոխվում, պրակտիկայով կենդանանում, պրակտիկայով ուղղվում, պրակտիկայով ստուգվում, յերբ ատանձնապես ճիշտ են Մարքսի այն բառերը, թե «պրակտիկ շարժման ամեն մի քաջ ավելի կարևոր է մի դուժին ծրագրից», — ամեն մի քաջ հարուստների և ժողովիկների պրակտիկ իրական սանձահարման, կրճատման, լիակատար հաշվառքի և հսկողության տակ առնելու գործում ավելի կարևոր է մի դուժին ընտիր դատողությունից

սոցիալիզմի մասին: Վորովհետև «թեո-
րիան, իմ բարեկամ, գորշ է, բայց կանաչ
է կյանքի հավետենական ծառը»:

Հարկավոր է բանվորներից և գյու-
ղացիներից չեղած պրակտիկ-կազմա-
կերպիչների մրցակցութիւն կազմա-
կերպել: Հարկավոր է պալքարել ամեն
տեսակ շաբլոնացման և վերեւից միա-
տեսակութիւն հաստատելու փորձերի
դեմ, դեպի վորն այնքան հակված են
ինտելիգենտները: Վնչ շարլոնացումը,
վնչ ել վերեւից միատեսակութիւն հաս-
տատելը վոչ մի կտպ չունեն դեմոկ-
րատական և սոցիալիստական ցենտրա-
լիզմի հետ: Հիմնականի, արմատականի,
եղականի միասնականութիւնը վոչ թե
խախտվում, այլ ասպահովվում է ման-
րամասնութիւնների, տեղական ա-
ռանձնահատկութիւնների, գործին մո-
սեմալու ձևերի, վերստուգման իրա-
կանացման յեղանակների, պարագիտ-

ների (հարուստների և ժուլիկների,
դատարկապորտների և ինտելիգենցիա-
լից չելած հիստերիկների և այլն և
այլն) վոջնչացման և անվնաս դարձնե-
լու ուղիների բազմատեսակությամբ:

Պարիզի Կոմունան նախաձեռնության,
ինքնուրույնության, շարժման ազա-
տության, ներքևից թափի եներգիալի
և կամավոր, շաբլոնների խորթ ցենտ-
րալիզմի զուգակցության մի մեծ որի-
նակ ցուլց տվեց: Մեր խորհրդները
նույն աչդ ուղիով են ընթանում: Բայց
ներանք դեռ «վեհերում են», դեռ չեն
ծավալվել, չեն «ընտելացել» սոցիա-
լիստական կարգերի ստեղծման իրենց
նոր, մեծ ստեղծագործական աշխա-
տանքին: Հարկավոր է, վորպեսզի խոր-
հդներն ավելի համարձակ, ավելի
նախաձեռնությամբ գործի դիմեն: Հար-
կավոր է, վորպեսզի ամեն մի «կոմու-
նա» — վոր գործարանն ասես, վոր գյուղն

ասես, վոր սպառողական ընկերու-
թյունն ասես, վոր մատակարարման
կոմիտեն ասես — հանդես գա, մրցակցի
մյուսներին հետ իբրև աշխատանքի և ար-
դյունքների բաշխման հաշվառքի և վեր-
ստուգման գործնական կազմակերպիչ:
Այս հաշվառքի և վերստուգման ծրագիրը
շատ հասարակ, պարզ, հասկանալի չե ա-
մենքի համար. — վորպեսզի ամեն վոք
հաց ունենա, վորպեսզի բոլորն ամուր
վտանաման և չսպառուած հագուստ հագ-
նեն, տաք ընակարան ունենան, բարե-
խիղճ աշխատեն, վորպեսզի վոչ մի
ժուլիկ (այդ թվում նաև աշխատանքից
խուսափող) ազատ ման չգա, այլ բանտ
նստի կամ պատիժը կրի ծանրագույն
տեսակի հարկադրական աշխատանքնե-
րով, վորպեսզի սոցիալիզմի կանոննե-
րից և որենքներից շեղվող վոչ մի հա-
րուստ չկարողանա խուսափել ժուլիկի
վիճակից, վոր իրավամբ պետք ե հա-

րստի վիճակը դառնա: «Ով չի աշխատում, նա թող չուտի», — ահա սոցիալիզմի գործնական պատգամը: Ահա ինչն է հարկավոր գործնականորեն կարգավորել: Ահա ինչպիսի գործնական հաջողություններով պետք է հպարտանան մեր «կոմունաները» և մեր բանվոր ու գյուղացի կազմակերպիչները, մանավանդ ինտելիգենտները (մանավանդ, վորովհետև նրանք խիստ սովորել են, չափազանց սովորել են հպարտանալ իրենց ընդհանուր ցուցումներով և բանաձևերով):

Հարստների, ժուլիկների և ձրիակերների գործնական հաշվառքի և վերստուգման հազարավոր ձևեր և լեզանակներ պետք է մշակվեն և պրակտիկայում փորձվեն հենց գյուղի և քաղաքի կոմունաների, մանր բջիջների կողմից: Այստեղ ալլատեսակությունը կենսունակության չերաշխիք է, հա-

Ջողության յերաշխիք, հասնելու ընդ-
 հանուր միասնական նպատակին, գտե-
 լու Ռուսաստանի հողն ամեն տեսակ
 փնասակար միջատներից, ժուլիկ-լվե-
 րից, հարուստ-փայտոջիւններից և այլն և
 այլն: Մի տեղ բանտ կնստեցնեն տաս-
 նյակ հարուստների, մի դյուժին ժու-
 լիկների, կես դյուժին բանվորների,
 վորոնք խուսափում են աշխատանքից
 (հենց այնպես՝ խուլիգանաբար, ինչպես
 Պիտերում խուսափում են շատ գրա-
 շարներ, հատկապես կուսակցական
 տպարաններում): Մի այլ տեղ նրանց ար-
 տաքնոցներ մաքրող կնշանակեն: Յեր-
 րորդում — կարցերում պատիժը կրելուց
 հետո նրանց դեղին տոմսեր կտան,
 վորպեսզի մինչև ուղղվելն ամբողջ ժո-
 ժովուրդը նրանց հսկի, իբրև վնասա-
 կար մարդկանց: Զորքորդում — տեղն
 ու տեղը դնդակահարում են ձրիակե-
 րության մեջ հանցավորներից տասից

մեկին: Հինգերորդում—մտածում են
զանազան միջոցների կոմբինացիա և,
որինակ, պայմանական ազատագրման
միջոցով հասնում են այն բանին, վոր
արագ ուղղում են հարստների, բուր-
ժուական ինտելիգենտների, ժուլիկնե-
րի և խուլիգանների ուղղելի տարրե-
րին: Ինչքան այլատեսակ, այնքան ա-
վելի լավ, այնքան ավելի հարուստ
կլինի ընդհանուր փորձը, այնքան ա-
վելի վստահելի և արագ կլինի սոցիա-
լիզմի հաջողությունը, այնքան ավելի
հեշտությամբ պրակտիկան կմշակի--
վորովհետև միայն պրակտիկան կարող
է մշակել—պայքարի լավագույն յեղա-
նակներ և միջոցներ:

Վոր կոմունայում, մեծ քաղաքի
վոր թաղում, վոր գործարանում, վոր
գյուղում չկան սովածներ, չկան գոր-
ծազուրկներ, չկան հարուստ ձրիակե-
րներ, չկան բուրժուազիայի լակեյնե-


րից չելած գարշելի մարդիկ, սաբոտաժ
անողներ, վորոնք իրենց ինտելիգենտ
են անվանում: Վ՛որտեղ ե ավելի շատ
բան արված աշխատանքի արտադրողա-
կանությունը բարձրացնելու համար:
Զբաւորների համար նոր լավ տներ
կառուցելու համար, նրանց հարստնե-
րի տներում տեղավորելու համար:
Աղքատ ընտանիքների ամեն մի չերե-
խաչի կանոնավոր կերպով մի շիշ կաթ
հալթալթելու համար: Ահա ի՞նչ հար-
ցերի վրա պետք ե ծավալվի կոմու-
նաների, համայնքների, սպառողական-
արտադրողական ընկերությունների,
բանվորների, զինվորների և գյուղա-
ցիների պատգամավորների Խորհրդների
մրցակցութունը, ահա ի՞նչ աշխա-
տանքում պետք ե գործնականապես
դառնան և վերև, դեպի համապետա-
կան կառավարման գործը դիմեն կազ-
մակերպչական տաղանդներ: Ժողո-

վրդի մեջ նրանց թիվը շատ է: Նրանք
միայն ճմրված են: Հարկավոր է ոգնել,
վոր նրանք իրենց ուժերը ծավալեն:
Նրանք յեվ միայն նրանք մասսաների
աջակցութեամբ կկարողանան փրկել
Ռուսաստանը և փրկել սոցիալիզմի
գործը:

Ծանոթություններ

1. Վ. Իլյիչը մեջբերում է անում Մարք-
սի Բրակկեչին ուղղված նամակից, վոր գր-
ված է 1875թ. մայիսին գերմանական ս. դ.
կուսակցության Գոթայի ծրագրի առթիվ
(Տես К. Маркс.—«К критике Готской про-
граммы», Гиз, 1927 г., стр. 48):

2. «Թեորիան, իմ բարեկամ, գորշ է,
բայց կանաչ է կյանքի հավիտենական ծա-
ռը»: «Grau, teuer Freund, ist alle Theorie,
und grün des Lebens goldner Baum» — Մե-
ֆիստոֆելի բառերն են Գյոթեի «Փառասո-
ում»:



գԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0044835

(124)

В. Ленин.
КАК
ОРГАНИЗОВАТЬ
СОРЕВНОВАНИЕ?

А $\frac{1}{8187}$



ԳԻՆԸ 5 ԿՈՊ.